

FLAG ծրագրի դիմումագրի ընթացակարգեր

Դիմումագրի, ընտրության և արձանագրության ընթացակարգեր՝ FLAG (Գլենդեյլի օտար լեզվի ակադեմիա) երկլեզվյան իմերժեն ծրագրում նոր արձանագրված աշակերտների համար

1. Մեծապես ֆաջալերվում է ձեր մասնակցությունը FLAG ծրագրով դպրոցի առնվազն մեկ շրջայցի, եթե ոչ բոլորին: Եթե ձեր երեխան ընտրվել է այն դպրոցի համար, ուր դուք չեք այցելել, ձեզանից կխնդրվի շրջայց կատարել նախքան արձանագրության վավերացումը:
2. FLAG ծրագրի դիմում կատարելու համար, լրացրե՛ք կայքէջի դիմումագիրը, որոշված ժամկետի ընթացքում: Եթե չունե՛ք ինտերնետի հնարավորություն, դուք կարող եք լրացնել դիմումագիրը FLAG ծրագրին առաջարկող որևէ դպրոցում կամ Աշակերտների աջակցման ծառայությունների գրասենյակում (SSS), որի հասցեն է՝ 223 N. Jackson St. Room 203, Glendale: Անձնակազմը և թարգմանիչները ներկա կլինեն օգնելու ձեզ: Ձի ընդունվում ֆախսի միջոցով ուղարկված դիմումագրեր:
3. Կայքէջից տպեցե՛ք տեղեկությունների վավերացման անդորրագիրը՝ որպես փաստ ձեզ մոտ պահելու համար և ստուգե՛ք ձեր անձնական տեղեկությունները, դասարանի մակարդակը և ձեր ընտրությունների ստույգ լինելը: Դուք կարող եք կայքէջի վրա փոխել ձեր անձնական տեղեկությունները, սակայն ծրագրային որևէ փոփոխություն կատարելու համար պետք է կապվե՛ք Մագնետ ծրագրի գրասենյակի հետ 818-241-3111 ներքին 1237 հեռախոսահամարով:
4. Եթե դիմորդը խոսում է FLAG ծրագրի նպատակաուղղված լեզվով, դիմորդը կարող է ընտրվել լեզվի գնահատման համար, ինչը կորոշի, թե ինչ խմբի կատականի նրա դիմումագիրը՝ վիճակահանությանը մասնակցելու համար: Դպրոցի ներկայացուցիչը, ըստ պահանջի, կկարգադրի երեխայի ֆննդության օրը:
5. Եթե նոր դիմորդը դիմում է FLAG ծրագրի առաջինից 6-րդ դասարաններից որևէ մեկի համար, բացառությամբ մանկապարտեզը, նա պետք է տիրապետի նպատակաուղղված լեզվին: Լեզվի հավելյալ ֆննդություններ կարող են պահանջվել՝ ընդունելիությունը որոշելու համար:
6. Երբ ստացվի ձեր դիմումագիրը և այն վավերացվի կրթաշրջանի Աշակերտների աջակցման ծառայությունների գրասենյակի (SSS) կողմից, դուք աշակերտի ընտրության և վիճակահանության մասնակցման մասին կտեղեկացվե՛ք էլ-փոստով: (Էլ-փոստի հասցե չլինելու դեպքում ծնողները կտեղեկացվեն նամակով): Ծրագրի ընտրության որևէ փոփոխություն պետք է կատարվի FLAG ծրագրի գրասենյակի հետ կապվելով 818-241-3111 ներքին 1237:
7. Ժամկետից ուշացած դիմումագրերը նկատի չեն առնվում վիճակահանության համար, այլ դրվում են հերթացուցակի վերջում՝ ըստ իրենց առաջնահերթության կարգավիճակի:
8. FLAG ծրագրի աշակերտի ընտրության վիճակահանության մասնակցությունն ազատ է հանրության, որը տեղի կունենա Գլենդեյլի հանրային դպրոցների վարչական կենտրոնում, որի հասցեն է՝ 223 N. Jackson St. Room 109, Glendale.
9. Աշակերտի ընտրության արդյունքները նամակով կամ էլ-փոստով կուղարկվեն բոլոր դիմորդներին:
10. FLAG ծրագրում ընտրվելու դեպքում, կրթաշրջանը պահանջում է 3 շաբաթների ընթացքում լրացնել արձանագրության փաթեթը և վերադարձնել դպրոց: FLAG ծրագրի ընդունելությունը չի հաստատվի մինչև չամբողջացվի արձանագրության փաթեթը և չվավերացվի դպրոցի կողմից, այդ թվում՝ թույլատվություն (permit) պահանջող դիմումագրերը:
11. Գլենդեյլի հանրային դպրոցների կրթաշրջանից դուրս վիճակահանությամբ ընտրված աշակերտները, արձանագրության փաթեթից բացի պետք է ներկայացնեն իրենց կրթաշրջանից ազատ արձակվելու թույլատվությունը որպես արձանագրության պահանջի մի մաս: Ներկրթաշրջանային թույլատվությունները կախյալ են դպրոցում և դասարանում տեղ լինելուց և մասնագիտացված ծրագրեր ունենալուց:
12. Եթե ընտրված աշակերտը մինչև 3 շաբաթ չլրացնի արձանագրության փաթեթը, ապա նրա դիմումագիրն անվավեր համարելով, նրա տեղը կտրվի հերթացուցակի հաջորդ դիմորդին: